որ ես ալ օձի չը նմանիմ։

Պ. Ըսելիքս սակայ է, որովհետև դուն
մեր սրտախոս ըսելուն բարկացար, հապա
Բրևտոս՝ սրտախոս մարդուն ատանալի որ-
դի կրսէ ատոր ինչ պիտի ըսես։

Չ. Ես իմ Ն.տուածս բոլոր սրտով կը սի-
րեմ ատ տեղ տուա չըկայ որ ատանալի որդի
ըլլամ. ատոնք ես չըկամ. սրտախոսները Թող
հոգան։

զ. Ինչպէս քեզի ըսած մը հարցնեմ։ Քու տունդ մէկուսատեղ մարդ մը գայ, ուրիշ ոչխար հետ երախտիք ունենայ, պէտք է որ անոր աւելի պատիւ ընես. որովհետև անիկայ իր երախտեաց վրէժխնդիր պատիւ կը խնդրէ քեզմէ իր մխոթքը, և դուն ալ անոր երախտեացը վայելուչ պատիւ մը չընես, ոչ գինի և ոչ օղի (1), ոչ օշարակ (2) և ոչ սուրճ (3). և ոչ կերակուր. ապա միայն լեզուով զրուցես այն մարդուն թէ՝ ես զքեզ շատ կը սիրեմ, մեր տունը գալուդ վրայ շատ ուրախացայ, իմ սիրտս քու վրայէն բնաւ չի պիտի վերցընեմ. աշխարհիս մէջ քեզմէ աւելի սիրած մարդ չունիմ ըսես նէ արդեօք այն մարդը քու խօսքիդ կը հաւատայ մի, որովհետև ծախքով պատիւը խնայեցիր՝ որ աչքով կը տեսնուէր, ու ձեռքով ալ կը բռնուէր. հապա աւ քու բերանէդ եղած հոլին կը հաւատայ մի, որ բերանէդ կելլայ ու օդը կը ցրուի. ոչ կը տեսնուի և ոչ կը բռնուի, այն մարդը քեզմէ շատ պատիւ կը խնդրէր,

(1) Օղի. Ըսախկ։
(2) Օշարակ. Շէրպէթ։
(3) Սուրճ. Ղահվէ։

գան մէկ բառակ մը ծախք չըլլաց բերանէդ ելած հոգիդը գլխէդ ճամբեցիր գընաց, ալ ես քեզի շատ կը սիրեմ ըսելուդ կը հաւատայ մի քեզ հարցնեմ :

2. Ես օրինակիդ մէկ յարմար օրինակ մը կերևնայ կոր, կուզեմ որ առ մինքը հաղորդըցընես ինձի :

3. Արդեօք միայն մարդոց երեսը կը նայի ու գեղեցիկ ե թէ տըգեղ ե զանիկայ կընայ գիտնար. սիրտը ամենևին չի կրնար քըննել. բայց՝ երեն պատիւ ընդունելիք առեղայ իր անձին վայելուչ պատիւ չը տեսնայնէ բերանով կը սիրեմ ըսելուն չի հաւատար. հապա մեր ամէնաբարի և ամէնագէտ Աստուած, որ մեր վրայ տրքան երախտիքներ ունի. ու մեր սրտին խորհուրդները կը քննէ, և իր երախտեաց վոխարէն մեզմէ պատիւ կը խնդրէ, և մեք բնաւ երբէք պատիւ մը ըրած չենք. իր պատուէրները պահել չենք. հիմայ միայն լեզուով զղջումը (Աստուած կը սիրեմ, Աստուծոյ երախտիքը չեմ մոռանար) բաւ նէ արդեօք Աստուած կը հաւատայ մի սա բերանէդ ելած ու օդը ցրուած հոլլին. ինչպէս որ Աստիքիա կըսէ (Ամէն

վառարար առնէ զհայր. և ծառայ երկնչի՝ ի տեառնէ իւրմէ. եթէ հայր եմ ես՝ ուր է վառքեան իմ. և եթէ տէր եմ ես՝ ուր է երկիւղն իմ ասէ տէր):

Թ. Ասելն իւր հօրը պատիւ կընէ, ու ծառան ալ իւր տիրոջմէ կը վախնայ, (եթէ ես ձեր հայրն եմ՝ ուր է իմ պատիւս, և եթէ ձեր տէրն եմ՝ ուր է ինձմէ վախերնիդ կըսէ Աստուած, 1 պետ. 6 համար: Ու տակից՝ ի զատ մեր Քրիստոս տէրն ալ կը հրամայէ, (Օ՛ի դոյէք զիս Տէր Տէր և զոր ասեմս ոչ առնէք):

Թ. Ինչո՞ւ ինձի Տէր Տէր կը կանչէք բայց խօսքերս չէք պահեր նէ կըսէ: Ղուկաս 6 գլուխ 46 համար: Տես որ խօսքը բանի չըբերնէր կոր՝ գործքով չը սիրես նէ:

Ժ. Կարծեմ աս յանդիմանութիւնը Աստուած չը սիրողներուն համար գըրուած է, ինձի բան չկայ աս տեղ, ինչու որ ես իմ Աստուածս բոլոր սրտով և բոլոր մտօք կը սիրեմ:

Ժա. Ուրն շատ կը պարծենաս կոր քեզի մէկ բան մը հարցընեմ, դուն Աստուած տեսած ունիս մի:

ե. Ձկ եղբայր՝ Յուսաց ով կարող է տես-
նալու :

զ. Հապա Յուսաց տեսած ջանիս ու
կարող ալ չես տեսնալու. ինչպէս որ դուն
վկայեցիր : Ու եղբայրդ ալ քու աչացդ ա-
ռաջ է միշտ կը տեսնաս. ու Յուսաց ալ
քեզի պատասխրեր է քու ընկերդ. քու անձիդ
պէս պիտի սիրես ուրի : Հիմայ դուն Յուս-
ծոյ պատասխրը չես պահեր. քու միշտ տե-
սած եղբայրդ չես սիրեր նէ հիչ ջտեսած
Յուսաւածդ ինչպէս պիտի սիրես, ինչ
պէս որ Յօհաննէս կը գրէ (Ար ոչ սիրէ
զեղբայր իւր զոր տեսանէ՝ զաստուած որ ոչն
ետես զի՞նդ կարիցէ սիրել) :

թ. Անշա իրեն տեսած եղբայրը չի սիրեր
նէ հիչ ջտեսած Յուսաւածը ինչպէս կրնայ
սիրեր կըսէ : Ուրեմն կաթուղիկեաց 4 գլ-
լուխ 20 համար : Հիմայ հասկցար մի որ
Յուսաւած սիրելուն նշանը եղբայրսիրութեան
մէջ կերեւնայ կոր :

ՇԱՒՒՂ ԺԵ.

ե. Ինչու համար տասը պատուէրին մէջէն
ասս երկու պատուէրը՝ այսինքն՝ Յուսաւած

սիրել և ընկերը սիրելը մեծ ու առաջին բաց Քրիստոս ։

գ. Նրանք ու երկու պատուերը հաստատ պահես նրանց ասած պատուերն ալ կը կատարաւ ։

դ. Ումը պատճառաւ երկու պատուեր պահելով ասած պատուերը կը կատարուի ։

գ. Նրանք քու Աստուածդ բոլոր սրտով սիրես նե, նախ՝ անոր անունը պարտաւ տեղը բերանդը չես առներ ու սուտ բանի համար Աստուած վկայ չես բռներ. բ. կուռք չես ունեներ. գ. շաբաթը սուրբ կը պահես այսինքն՝ կին՝ կիրակին. մարմնաւոր գործերդին ես կայներով հոգեւոր գործ կը պարտուին. դ. հայրդ և մայրդ կը պատուես ։ Տեսնի մի որ հինդ պատուէր կատարեցար ։

դ. Քանդ Աստուծոյ ես կատարած չեմ որ կուռք չունեմ, կուռքը կատարելը կը չհանեն ։

գ. Ես կը պարծենամ կոր կատարած չեմ ոչի բայց՝ Պօղոսին խօսքին նայինք նե, եթե ոգահոգիին որ ունենամ կարծեմ թե ան ալ կատարելութիւն է որ կրնե (Ծայր տեղ

կամ ամէն կամ ոչինչ, որ է կատարեալ թիւն, ոչ ունի գերազանցութիւն չափաւորութեան Քրիստոսի և Աստուծոյ)։

Թ. Ամէն ազէկ գիտցէք որ բոլոր պատուիրանները, ու ամէնքը ու ոչինչները, որ կատարեալ թիւն է, մեր Քրիստոս Աստուծոյ արքայութեան մէջ բաժին չունին կրնէ։ Ուրեմն Տիեզերացոյց 5 գլուխ 5 համար։

Ժ. Հապա ինչ ընենք եղբայր անօթի ու մերկ պատահինք վատառակ չընե՞նք մի։

Ա. Անօթի ու մերկ ինչո՞ւ պիտի պատահինք, քա ապրուստի համար առեւտուրի մէկ ոչինչ մը չունիք ու ձեր ոչինչերուն մէջ ինչպէս որ Պօղոս կրսէ։

Ե. Պօղոս ինչ կրսէ։

Ա. (Ընդհանրապէս մեծ Աստուածպաշտութիւն է բաւականութեամբ (1) հանդերձ)։

Թ. Բաւականութեամբ առեւտուրը մեծ Աստուածպաշտութիւն է կրսէ։ Ուրեմն Տիմոթէոս 6 գլուխ 6 համար։

Ե. Պօղոս առ հոգին ըսեր է շատ բարի, բայց՝ ինչն ծախքս շատ կրլայ ինչպէս ելլէ վատառելով բաւականանամ։

(1) Բաւականութիւն. Դանահամ։

զ. Պօղոս՝ քու շապկիդ (1) ետեւը ինչ եղեր որ կըսես (՞ի ոչ բերած ինչ յաշխարհս և ոչ տանիլ ինչ կասցուք, այլ ունիմք կերակուր և զկերպս այնու շատանալոյ. իսկ որք կամին մեծանալ՝ անկանին ՚ի փորձութիւն և յորոգայթ):

թ. Ո՛ւ աշխարհքըս քան մը չը բերինք ու քան մըն ալ չենք կրնար տանիլ, հապա ուտելու կերակուր և հագնելիք ունինք անով բաւականանանք, ով որ մեծնալ կուզէ նե փորձութեան և որոգայթի մէջ կինայ կուտէ։ Այո՛ Պօղոսին մտքէն ասիկայ կը հատկիլ թէ, քու փոխել կըշտանալու չայի կերակուրն. և մերկութիւնդ ծածկելու չայի շալի որ բաւականանաս նե շատ ծանր չես ունենար որ քիչ վաստակով կը բաւականանաս. ագահութիւն և արծաթասիրութիւն պէտքը չըլար որ ընես. բայց՝ քու ծանրքդ շատցար ուսերնիդ ու չատցար հագուելիքդ համար չէ։

ե. Ճատա ինչըս համար է։

(1) Շապկի. Մխաիթար։

պ. Ինչ անկաճ դիր որ քու ծախքերուդ առջև քեզի ցոյց տամ նայիր գիտեմ թէ չէ գիտեմ, նախ՝ չափէ աւելի անուշ և պարապ խերախտութիւն ուտել խմել գինեասունները՝ քնարներով (1). սրինգներով (2) ու թմբկ բուխներով (3). և խաղայտ սղոյգներով, և տեսակ տեսակ խմելիքներով: Ու Բ. չափէ աւելի ծանրոցին լաթեր պիտի հագուս. անդամանդ (4) մատանի, և կամ ծանրոցին ժամացոյց (5), և կամ ծանրոցին մուշմակ (6) պիտի հագուս եացին: Ու Գ. գեղեցիկ տարտասներ (7) և սենեակներ պիտի չինես. ու միտաւոր պարտէզներ (8) պիտի զարդարես: Ու Դ. աս աշխարհիս մէջ մեծ անուն պիտի ժառանգես ու մեծ պատիւ գրանալու համար շատ բաներ պիտի ցրուես:

(1) Քնար. Սանթուր:
(2) Սրինգ. Ղաւալ, նէյ:
(3) Թմբուկ. Տաւուլ, թէֆ:
(4) Անդամանդ. Էլմաս:
(5) Ժամացոյց. Սահաթ:
(6) Մուշմակ. Փխրք:
(7) Տարտաս. Ղօնախ, սէրայ:
(8) Պարտէզ. Պահչէ:

Ն. ե. ապրանքներուն բարկանալը անոնց վրայ դառնալեն ընես. կուսակալներուն (1) դռները կաշտո կեցընես այն մնալը յաղթելու, և քու խօսքդ քակցընելու և էար կամքդ կատարելու համար: Ն. զ. քու կինդ, կամ աղջիկդ և կամ հարսդ պիտի զարդարես կուռքի պէս, ականով արծաթով, անդամանդ ծաղկներով և մատանիներով, և մեռաքսեղէն (2) լաթերով, որ առնողներուն աչքին առջի զեղեցիկ երեւնալով, հաճոյ ու ցանկալեաւ կրակնին բորբոքի որ մեծ մեղաց մէն ալ պատճառ ըլլաս եւայլն:

Ինչ առ հասարակ է քու ծախքդ, առնք քու ըսածդ կըլլայ, ու քիչ առակալ չի քալեր քու բռնած գործդ երեսայր. աշխարհիս բոլոր ականը ու արծաթը քեզի որ տան աչքդ չի կշտանար դեռ պահս կուգայ քու ծախքիդ, առ հասարակ քիչ վաստակ չես բառականանար: Ինչա հասկըցար մի կուսակալ ըլլալդ. վերը պարծեցար թէ ես կուսակալ չեմ. ինչպէս որ Յօհաննէս ալ կըսէ:

ԺԴ. Յօհաննէս ինչ կըսէ:

(1) Կուսակալ. փաշայ:

(2) Մեռաքս. Իմէք:

Պ. Որեակը պահեցէք զանձինս ՚ի կուռ պաշտամէնէ։

Թ. Որեակներ ձեր անձը կռապաշտութենէն եւ պահեցէք կրակ։ Ուսմունք կամ ղևիտայ 5 գլուխ 21 համար։ Այս խօսքը չը կարծես թէ կռապաշտութիւն գրուած է՝ հապա քրիստոնէից գրուած է, որ միտքը մեր բուռ արծաթասիրութենէն ու վերը պատմած չարիքներից ծախքերէն զգուշացնելու համար կը գրէ։ Եւս Պօղոս ալ կրակ (՚ի՛ տրնատ ամենայն չարութեան արծաթասիրութիւնն է)։

Թ. Ինչո՞ւ մեղայ արհամարհութիւն է ըսելն ի պատ, աս մարդկային բնութիւնը միշտ մեծութեան ցանկացող ու մեծամիտ ըլլալ գիտնալով՝ Տիմոթէոսին կը գրէ (Աստուածպատ ալ են յայտ աշխարհի պատուէր տալի մի հպարտանալ՝ և յուսալ ՚ի մեծութիւն մնալի, այլ Աստուած. զգուշութիւն գործել մեծանալ գործով բարութեան։ Գանձել անձանց հիմն բարի, և ՚ի հանդերձեալն ունայն ի բուռն արիանալին զՀաշտատիկ կեցուցէ)։

Թ. Ոչ աշխարհիս մեծամտութենէն պատա-

ուէր տուր որ չը հպարտանան, ու իրենց տուտ ու փուճ մեծութեան չը յուսան։ Հապա յոյսերնին Աստուծոյ թող դընեն. ու բարեգործութիւն թող գործեն ու բարեգործութիւնով թող մեծնան. այն աշխարհքին մէջ ճշմարիտ կենաց գանձ թող պատրաստեն կրսէ։ Ա. Տիմոթէոս 6 գլուխ 17 համար։

ՇԱԲՈՒԱԴ Ժ. Զ.

ա. Աղջայր հասկցայ որ տասը պատուէրին հինգը Աստուած սիրելով կը կատարուի. հապա հինգ պատուէրը ինչով կը կատարուի։

գ. Հինգ պատուէրն ալ ընկերըդ սիրելով կը կատարուի։

դ. Մէկ ընկերդ սիրելով հինգ պատուէրն ալ կը կատարուի։

գ. Այո նախ՝ եթէ ընկերդ քու անձիդ պէս որ սիրես նէ, անոր ինչը հետ չես թուեն չես ըներ. բ. անոր տպրանքը չես գողնար. գ. զանիկայ չես մեղցներ. դ. անոր հաւատը տուտ չես վիպեր. ե. անոր ու-

նեցած բաներուն աչք չես տընկեր ու ցան-
կար : Տեսնի մի որ հինգ պատուէր կատար-
ուեցաւ :

չ. Մէկ մարդ մը առ ատոր պատուէրն
ալ լսնան կրնայ մի պահեր , որքան ջանայ մէկ
երկու պատուէր պակաս կը մընայ , առիկա
ինծա ունի մի :

գ. Ար բանը ինձի մի հարցըներ հապա
Յակոբոսին հարցուր որ քեղի պատասխանէ
թէ (Ար ոք զամենայն օրէնսն պահիցէ և մի-
սոյ խոխք ինչ դըժիցէ՝ եղեւ ամենայն օրի-
նացն պարտապան) :

թ. Ով որ բոլոր պատուէրները պահէ ու
մէկ տեղ մը խոր թողու նէ բոլոր օրէնքին
պարտապան կըլլայ : 2 դեպ 10 համար :

չ. Ընանկ է նէ իմ բանս շատ դժուար է ,
վասն զի թէպէտ ես չնութիւն չեմ ըներ .
գաղտութիւն չեմ ըներ , մարդ չեմ մեռցըներ ,
ու տուտ չեմ վկայեր , բայց՝ ակնի արծաթի
և աշխարհս բաներուն կը յանկամ ու կը
սիրեմ , անանկ է նէ բոլոր օրէնքին պարտա-
կան եղեր եմ :

գ. Ար աշխարհասիրութեանդ պատասխա-
նը թող կենայ . տար համար վերջը պիտի

խօսիմ քու հետս, սակայն սուէց առաջ էրես բան պարծեցար չեմ ըներ ասէ. կարծեմ անանց բոլորն ալ կընես ու ընելոյդ չես գիտեր անոր համար կը պարծենաս չեմ ըներ ասէ։

Ե. Ես սուտ չեմ պարծենար, յիրաւի որ սա չորս մեղքերը գործեր չեմ բնաւ երբէք։

Գ. Դուն գողութիւնը մըը կը կարծես։ Հոնները մարդ մեռցընել ապրանքը առնել. և կամ տանը պատը ծակել միջի ապրանքը գողնալուն մի կը կարծես, մինակ ատիկայ չէ գողութիւնը. հապա. մէկ դրամի չափ գողութիւն ընես գիտութեամբ ուրիշին ապրանքը քու կողմդ անցընես, կամ պարտքիս մըտր մը քաշելդ գայ նէ ուրիշին տուածդէդ և կամ արժածէն աւելի տաս, որ այն մարդը քեզի չանձնաւոր է. ապրանքին գինը չգիտնալով որ խաբեցիր. և կամ գէշը ապէկի տեղ տուիր, և կամ կանգառնը պիտի քաշեիր չքաշեցիր. նաև աւելի պահած չափ այսինքն՝ (կենդիւնար 1). լիտր. հոլոյդ դրամ. կշռիս կանգառն գործածելիր նէ՝ տանդ բոլորն ալ վերը պատմած գողութեան հետ

(1) Կենդիւնար. Ղանդար,

ար գողութիւն են։

ՀԵ. Ոտից փոքր բանին ալ մեծ գողութեան հատատար են։

Զ. Այո, ահա Բրիտտոս կը հրամայէ (Որ ի փոքուն անիրաւ է և ի բազմին անիրաւ է)։

Թ. Ինչ բանին անիրաւ եղալը շատին ալ անիրաւ կըլլայ կըսէ։ Ղուկաս 16 գլուխ 10 համար։ Ուն ալէկ պիտուս որ կրնայիր մարդ մեռցընել առլուանքը առնել. և կամ տանը պատը ծակել մինչ տապանքը գողնալը շատ դժուար բան է. և մանաւանդ վտանգաւոր, կարելի է որ բռնուիս ձեռք անձնիս, կամ մեռցնեն և կամ շղթայանեքով կապած բանտը դընեն շատ ժամանակ կը կապտատեն. որ անոր համար կը վախնաս տապէս գողութիւն ընելու, էն մէկ Աստուծմէ վախի համար, հապա բռնաւորի վախի համար, և կամ պատիժ կապտելուն համար կը վախնաս, քայց՝ տապէս գիտցուիլեանդ ծածուկ գողութիւն ընելու չես վախնար, ինչու որ դիւրագին կապած մարդը չի պիտի քու գողութիւնդ որ վախնաս և կամ տանչես պատիժ կը կապտի տէր հոգ ունենաս, անոր համար մեծամեծ գողութեան հատա-

սար են, ինչպէս որ Սողոմոն կըսէ. (Կշիռ մեծ և փոքր՝ ամէնք են առաջի Աստուծոյ երկրեան):

Թ. Մեծ և փոքր չափերը. երկուքն ալ Աստուծոյ առաջ ամէնք են կըսէ: Արակաց 20 գուխ 10 համար:

Ժ. Սուրբ գիրքերուն՝ և քու բուռ խոհքերուդ՝ որ նայինք նէ հիչ մէկ մարդ մը առանց գողութենէն ազատ չէ, ուրեմն որ առևտուրնիս է, և հինա հասկցայ որ գողութիւն կընեմ եղեր. մեր վրայ հաստատելիր գողութիւնը, վասնամ թէ ուրիշ արծաթ ցածներուս ալ մէկիկ մէկիկ վրանիս ամէնք հաստատես, բայց՝ մարդ չեմ մեղադրեր առանց նայինք ատոր ինչ ամէնք ըսես. կարծեմ ատոր պատասխան չպիտի կրնաս տալ:

Ա. Իմ վիճակներս հաստատակ մարդիկ չեն որ ընդունիս. ահա անկից դիր տես Յոհաննէս ընտեր մի թէ (Ով որ իր եղբայրը կատէ նէ մարդասպան է) դուն կը կարծես թէ մարդ մեղքերը մինակ թողում, դառնալով մարթել. և (հրացանով[1]) զարնել. և կամ վիզը արևմտեան խեխտել նէ, որ բա-

(1). Հրացան. Թուֆէնկ.

նաւարկին կը վախնաս առ բանելը ընելու՝ զիս ալ կը մեղադրեն ոչի. բայց՝ երթալդ առելու և չը սիրելու չես վախնար. որով հետև բռնաւորը առանց քան չըսեր, առ ոեղ բռնաւորին վախ չկայ. միայն Աստուած կը բարկանայ, Աստուծմէ ալ վախ չունիս խոկըրէն. լսմընցաւ բանը. տեսայր մի որ հիչ չը գիտցած տեղը մարդասպանութիւնն ալ վերադ հատատուցաւ: Ու ը. զրկութիւնն ալ մարդասպանութիւն է:

է. Զրկութիւնը ինչ է հասկցուր քեզի:

պ. Մարդոց վրայ դատողութիւն ընել, զրպարտութիւն ընել, դէշ անուն հանել, բանտորին վարձքը կրտրել. խեղճ միամիտ մարդոց ունեցած ապրանքը, տունը, արտը, և կամ այլին, անիրաւութեամբ ձեռայը առնել. և կամ խեղճ աղքատներըմիշտ ինձմէ վախնան ոչի հանապազ կերեքել սիրտը ցաւցընելը մեծ պատնութիւն է. ինչպես որ Յակոբոս կըսէ:

է. Յակոբոս ինչ կըսէ:

պ. Այսուհետև մեծատունք լացէք և ողբացէք ի վերայ թշուառութեանցն որ

գալոց են ՚ի վերայ ձեր, զի մեծութիւնդ ձեր ոչ լինչ են, և հանդերձ ձեր կերակուր ցեցոյ, արծաթ ձեր և ոսկի ժանգահար. և ժանգ նոցա կերիցէ զմարմինս ձեր. զրկեցի՛ք և սպանի՛ք զարդարն որ ոչ էր ձեզ հակառակ) 5 գլուխ 1 համար։

Թ. Նախէց եւս ոմ մեծատուններ լացէ՛ք ու ողբացէ՛ք ձեր վերայ գալու թշուառութիւններուն համար. վասն զի ձեր մեծութիւնը ոչ լինչ են, ձեր լաթերը ցեցը պիտի ուտէ. ու ձեր արծաթը և ոսկին պիտի ժանգուտին ու անոնց ժանգը ձեր մարմինը պիտի ուտէ, ինչպես որ ձեզի դէմ կը կայնի նաղխաձգ ապ.քատները զրկողութիւնով ապանեցի՛ք կըսէ »,

ՃԱՒՈՂ ԺԷ.

Ա. Ինչո՞ւ համար զրկողութիւնը մարդասպանութիւն սեպած է։

Գ. Մէկ մարդ մը որ մեռցընես նէ մէկ անգամ մը կազատի աշխարհ.քէս. բայց՝ մէկու մը անունը կոտրես որ պատիւն վար իյնէ. յաւետուր կը կենայ ըներ. և կամ ոնե-

ցած ապրանքը անիրաւութեամբ ձեռքէն առնես. որ վերջին աղքատութեան տակ կ'ինկնի, այն մարդը քանի անգամ կորսընցուցած ապրանքը կամ պատիւը միտքը գայնէ, այնքան անգամ կը մեռնի սրտին կսկիծուն, անոր համար բաւականութիւն տալ է։

2. Ինչպէս որ վերը ըսինք թէ, առանց վնաս գործելու հնչ մէկ մարդ մը ազատ է, նոյնպէս այսպիսի մարդասպանութենէն ազատ ըլլ մարդ կը գտնուի, բայց՝ նայինք աս մեր քերանով վկայած աշխարհախոսութեանը մինչ պիտի բանս արդեօք։ Որովհետև խոստացար որ ասոր պատասխանը վերջը պիտի տայիր։

Գ. Ես մինչ պիտի բանս գուցէ իմ բածխս էլ հաւասար։ Ընկ Յակոբոսին ու Յօհաննէսին քով. անոնք լսելին գերեր են ինձի բաներ հարկ չէ, անոնցմէ տուէք։

2. Ես անոնք ըսեր տեղ գրուած ու հարցընեմ, ես քու բածխդ ալ կը հաւասամ, ձեռ նայիր մինչև հիմայ մինչ որ բանիր հաւասացի ու ընդունիմ էլ կ'ուզայ, ասոր ալ կը հաւասամ գուն հասկցուր տակայ ալ։

Գ. Յակոբոս կը գրէ (Ընդունիմ ըլ գի-

տէք զի սէր աշխարհիս այսորիկ թշնամու-
թիւն է առ Աստուած, որ ոք կամիցի սի-
րել զաշխարհս՝ թշնամի առնէ զանձն Աստու-
ծոյ)։

Թ. Ո՛վ հնացուցիչք եւ գիտիք որ աշխարհա-
սիրութիւնը Աստուծոյ դէմ թշնամութիւն
է, ուր որ աշխարհքը սիրել կուգէ նէ ինքը-
գինքը Աստուծոյ թշնամի կընէ կըսէ. 4 գլ-
ուխ 4 համար ու գլուխ մըտածէ ասիա թէ
ուրեմն վախնալիք բան է, ինչու որ՝ մէկ մար-
դու մը թշնամութիւնը Աստուծոյ հետ ըլ-
լայ նէ՝ ու ամբո վերջի վիճակը ինչ խեղճ
կըլլայ. մտածէ զի, ամբո պատուէրին (ինչ)
ամենուն բանս նէ ինչ օգուտ. ան մէկ աշ-
խարհասիրութիւնդ բաւական է գլեզ Աս-
տուծոյ թշնամի ընելով կորսընցնելու։

Ե. Յանդգնութիւն բառը հասկըցուր, նայիր
Յօհաննէս ինչ կըսէ։

Զ. (Ով սիրէ զաշխարհս ու մի ու ինչ յաշ-
խարհի է, որ ոք սիրէ զաշխարհս, ոչ է ինդ-
րա սէր հօր. ամ յաշխարհէ ասի է)։

Թ. Աշխարհը մի սիրէք ու աշխարհիս-
մէջ ինչ որ կայ նէ մի սիրէք, ուր որ աշխարհ-
ըը կսիրէ նէ հօր Աստուծոյ սէրը ամբո

արտին մէջ էն կենար. Տապա առ աշխատին վրայ է աչքը կըսէ: Ուրիշն կամ ուրիշներ 2 գլուխ 15 համար: Տեսար մի Յովհաննէսն ալ Յակոբոսին պէս կըսէ, և Յակոբոսին խօսքը առած կատարեցաւ (Որոր պատուէրը պահես ու մէկ տեղ մը խոր թողուս նէ բոլոր օրէնքին պարտական կըլաս) կըսէ:

ԾԱՒՈՂ ԺԸ.

Ա. Ընդայր ինչու համար աշխատիմք մարդոց հնազանդ կըսէ Յակոբոս:

Գ. Ես առաջ քեզի բան մը հարցընեմ. հաւատակ հնազանդ ասիս կըսեն, ասոր պատասխանը տուր ինձի:

Ա. Ով որ իր ամուսնոյն վրայէն աչքը վերցընէ ու ուրիշ մէկու մը վրայ ձըգէ ու սիրէ նէ անոր հնազանդ կըսեն:

Գ. Ընչի պատասխան տուիր. ահա մենք աչքերնիս պտոյտ ընէնք ամուսնոց վրայէն վերցընենք ու ասանկ չհնազանդինք վրայ ձըգենք նէ մենք ալ հնազանդ կըլլանք, ինչու որ մարդուս իր կնոջմէ սիրելու պար-

տական է, ինչպես որ Պօղոս կը պատուիրէ (Ընդ սիրեցէք զկանայս ձեր. այսինքն՝ ոմն մարդիկ ձեր կնիկները սիրեցէք)։ Ընդ սա սէրը վերնայ ու ուրիշին վրայ ձըգէ նէ շընաղող կըլլայ եղեր որ դուն ալ վկայեցիր, հապա զ'ատուածդ սիրելիք սէրը սա աշխարհիս բաներուն վրայ ձըգեցիք նէ չնացող ըլլալնուս կասկած մը կը մընայ մի արդեօք քեզի հարցընեմ։

Ե. Ատուածդ սէրն ալ այր և կնոջ սիրոյ կը նմանցընես։

Պ. Ես ինձմէ կըսեմ կը կարծես, ահա նայ կը գըրէ (Յորմէնակ ուրախ լինի փեսայ առ հարսին իւրում, այնպէս ուրախ լինի տէր 'ի քեզ)։

Թ. Ինչպէս որ փեսայն իր հարսին հետ կուրախանայ, նոյնպէս տէրը քու հետ պիտի ուրախանայ կըսէ 62 գլուխ 5 համար։ Եւ Բ. Յօհաննէս Ոսկեբերանէն Բրիտոսի համար կըսէ աշակերտներուն (Ու ասնոյի հարսն նա է փեսայն)։

Թ. Ով որ հարս ունի նէ փեսայն անիկա է կըսէ. Յօհաննու 3 գլուխ 28 համար։ Եւ Գ. Պօղոս կը գըրէ (Խօսեցայց զձեզ

առն միում իբրև զկոյն մի սուրբ յանդիման կացուցանել Քրիստոսի, բայց՝ երկնչիմ՝ գուցէ որպէս օձն խաբեաց զԵսայ խորամանկութեամբն իւրով, ապականեսցին միտք ձեր՝ ի միամտութենէն որ՝ ի Քրիստոս)։

Թ. Պիտի նշանեմ ձեզի մէկու մը, սուրբ կոյսի մը պէս Քրիստոսի դիմաց պիտի կոյնեցընեմ. բայց՝ կը վախնամ, չըլլայ որ ինչպէս օձը իր խորամանկութիւնովը մեր նախամայրը Եւան խաբեց նէ՝ ձեր միտքն ալ կը ջախջախընէք Քրիստոսի վերայօք։ Երկրորդ Կորնթացւոց 11 գլուխ 2 համար։

Ժ. Ես ըսած հարսն ու փեսայն ալ պիտի ըլլայ։

Ժա. Ես ըսածս հարսն ու փեսայն ալ պիտի

եղ ինձ պատկ և իբրև հարսն զարդու զարդարեաց զիս):

Թ. Իմ անձըս տիրոջմամբ պիտի ցնծայ , ինչու որ ինձի փրկութեան լաթեր ու ուրախութեան պատմուճան հագուեցուց . փեսայի պէս իմ գլուխս պսակ դրաւ . ու հարսի պէս լաթեներով զիս զարդարեց կըսէ . 61 գլուխ 10 համար : Ու այն հարսի պէս զարդարուած հոգիներուն փեսային Քրիստոս է , ու իր հետը կառնէ կը տանի արքայութիւնը իր խոստացած տեղը՝ ու միշտ անոնց վրայ կուրախանայ , ահա սա խօսքն է ալ Ցայտին կըսէ (Ինչպէս փեսային իր հարսին չեռ կուրախանայ . այնպէս տէրը քու վրայ պիտի ուրախանայ) անդիսու աշխատիքն է , սա աշխատիքը չը հատկընաս :

Հ. Ընդհակառակն մեկ վկայութիւնով մը կրնամ հաստատել :

Պ. Վկայն պատրաստ է ահա Պաւղոս կը գրէ (Ու՝ ի մէջ գիշերի եղեւ բարբառ . ահա փեսայ գայ արիք ընդ առաջ նորա . ելէք փեսային և պատրաստուքն մտին ընդ նմա ՚ ի հարսանիսն և փակեցաւ դուռն) :

Թ. Գիշերուան մէջ ձայն մը եղաւ թէ

ահա վեսայն կուզայ կոր առաջը ելնէք, վեսայն եկաւ. պատրաստ գանուածնիերը անոր հետ՝ ի միասին հարսնիքին տունը մըտան ու դուռը փակուեցաւ. 25 գլուխ 5 համար:

ե. Ըսուց խելքըս հասաւ, բայց՝ հարցմունք մըն ալ ունիմ, արդեօք ինչո՞ւ աշխարհասէրը մարդոց համար Ըսուծոյ թշնամի կըլլայ կըսէ Յակոբոս:

զ. Հոգին վերը պատմած երիկը եղեր և կամ կընիկը եղեր, իր բնական սէրը վերցընէ ու ուրիշի մը վրայ ձըգէ նէ վիրաւոր կաւեն. ալ իրարու թշնամի կըլլան. զորօրինակ աս մարդկային բնութիւնը՝ ի բնէ հեռու աղէկ բանի և գեղեցիկ և անուշ բանի ցանկացող է, ինչպես որ մեր նախամայրը ևան ըսաւ (ևս եռես կինն զի բարի էր ծառն՝ ի կերակուր, և հաճոյ աչաց հայելոյ, և գեղեցիկ՝ ի տեսանելն և էառ՝ ի պտղոյն և եկեր):

թ. Կնիկը նայեցաւ որ ծառը շատ աղէտ է ու աչաց գեղեցիկ կերևնայ. անոր համար պտուղէն առաւ ու կերաւ կըսէ. Ծրնունդ ոգոյ 3 գլուխ 6 համար: ևս Բ. Պաւլիմն ալ Ըսուծոյ ոչքան գեղեցիկ ու անուշ

խօսքեր սունենալը մեզի կվնասցընէ, որ ալէկ քան քնաւոյ ընդունելութիւն չունինք ու անոր անուշ ու զեղեցիկ պատուէրներուն հետեւինք (Յանկալի է նա քան զոսկի և քան զանա պատուական. քաղցր է նա քան զմեղու խորիսխ):

Թ. Ընդհակայ ցանկալիք է քան ոսկիէն ու քան անզամանդ քարերէն. և մեղրէն ալ անուշ է կըսէ: Սաղմոս 18 գլուխ 11 համար: Ու Թ. գալիլին մէկը Յիսուսին հարցուց (Վարդապետ քարի ինչ գործելով ալ կրնանք յաւիտենական ժառանգելցիս:

Թ. (Ալ քարի վարդապետ՝ ինչ ընեմ որ յաւիտենական կեանք ժառանգեմ) Բրիստոս նայեցաւ որ աս մարդը ալէկ քան կը քնաւէ կոր. ալ չարկ եղաւ Յիսուսին՝ ալէկ կը ով ըլլալը հասկըցնել ու ըսաց. (Ձիք ոք քարի բայց՝ մի Աստուած հայր) այսինքն՝ հօր Աստուծոյմէ՝ ի զատ հիչ մեկ ալէկ մը չկայ կըսէ: Մարկոս 10 գլուխ 17 համար: Ու տրամբեաւ ալէկ քան կը քնաւես կոր նե անկայ է ըսելով պատուիրեց Թէ (Վա՛ տի սիրես քու տէր Աստուածդ քու բոլոր

արտալ. բոլոր անձալ. ու բոլոր մլտօք և այլն): Տեսայ մի ինչպես սասիկ կը պատուհասէ զՅուսուֆ պիտի սիրես տէր, սէմա որ բոլոր զգայարանքներով զՅուսուֆ սիրելու կը հրամայէ. կերևի որ բոլոր զգայարանքներով զՅուսուֆ սիրելու պարտական ենք. հապա ատ սէրը Յուսուֆոյ վրայէն վերցնենք ու ատ աշխարհիս ոչինչ բաներուն վրայ ձգեմնք նէ Յուսուֆոյ թշնամի և չնացող չենք ըսեր մի. ահա ատոր համար Յակոբոս աշխատասէր մարդոյ շնացող և Յուսուֆոյ թշնամի ըսաց:

չ. Ծեմպէտ ես զՅուսուֆ բոլոր սրտով կը սիրեմ, սակր կասկած չունիմ. բայց՝ քիչ մը աշխարհիս փառքն ալ կը սիրեմ ասիկա վնաս ունի մի:

գ. Վերը ըսինք Քրիստոսի խօսքը թէ՝ բոլոր զգայարանքներով կը հրամայէ զՅուսուֆ սիրելու. դուրսը մէկ զգայարանք մըն ալ չի թողուր որ անով ալ աշխարհքի բաները մը սիրես, եթէ աշխարհքն ալ որ պիտի սիրես նէ. բոլոր սրտով զՅուսուֆ սիրած կըլլայ մի քեզի հարցընեմ: Ուրիշ լուսաց չկա՞ մի Քրիստոսի խօսքը թէ (11 ոչ կարէ ե-

կուց տէրանց ծառայել, կամ զմինն ատելէ և զմիւսն սիրելէ. ոչ կարէք Աստուծոյ ծառայել և մամոնային):

Թ. Ո՞վ մէկը երկու տիրոջ ծառայութիւն չի կրնար ընել, կամ մէկը պիտի առէ ու միւսը սիրէ, չէք կրնար Աստուծոյ ծառայել ու ապրանքի ալ կառչիլ: Աստիճան 6 գլուխ 24 համար:

Ժ. Երկու տեր կը չունի Բրիատոս, հաւլըցանք որ մէկը Աստուած է, արդեօք մէկը սրն է:

Ա. Մէկ մարդ մը որու ծառայէ նէ անկից աւտր տէրը կուգայ, եթէ դուն Աստուծմէ՛ ի զատ ուրիշ մէկուն ալ կը ծառայես այսինքն՝ աստուածային, համարէ թէ տիրոջդ մէկն ալ աստուածայն է: Ընդամ մը մտածէ՝ աճա, աստ երկու տիրոջդ ինչպէս ծառայութիւն պիտի ընես, ինչպէս որ մէկդմէկու հակառակ են, միաբանութիւն չունին, ինչպէս որ Պօղոս կըսէ (Ո՞ւնչ միաբանութիւն է Բրիատոի ընդ բելիարայ) այսինքն ինչ միաբանութիւն ունի Բրիատոս՝ Բելիարին հետ: Նելսարէ կրնթացուց 6 գլուխ 15 համար: Ու ասոնք մէկդմէկու հակառակ կը հրամա-

յեն իրենց հնազանդող ժողովրդոց։

Հ. Ի՞նչպես հակառակ կը հրամայեն։

Պ. Պրիամոս կը հրամայէ թէ քու թշնամիդ սիրէ. և սոր հակառակ սոսանայն կը ակ՝ քու սիրելիք ընկերդ սուտ է, Պրիամոս կը հրամայէ՝ քու ունեցած ապրանքդ աղքատներուն բաշխէ. և սոսանայն ալ կըսէ՝ աղքատներուն ձեռքը պոնուած բաներն ալ ան ձեռքեընուն, Պրիամոս կը հրամայէ՝ մեկ երեսէդ որ զարնեն նէ միւս երեսդ դարձնուր, սոսանայն ալ կըսէ՝ քեզի ապտակողը ձեռքէդ պայ նէ մեռցուր։ Պրիամոս կը հրամայէ՝ նեղ դուռը մտնիր որ լայն և ընդարձակ ալքայութիւնը երթաս. և սոսանայն ալ կըսէ թէ, լայն դուռը մտնիր որ նեղ և անձուկ մահ և խաւար դժոխքը երթաս. սոսոնք մի ինչպես հակառակ են. դուն սոնց որո՞ն բանին պիտի հնազանդիս ու կամքը կատարես, հնար չէ որ սոնց երկուքին հաճոյ ըլլաս. հապա անշուշտ սոնց մեկը պիտի բարկացընես։

Հ. Բա՛ւ լեցի ես Սատանայէն չեմ բարկացըներ՝ հապա սոսանայն կը բարկացընեմ ու Սատանայ ալ կը հնազանդիմ։

Պ. Ինչո՞ւ աստանային չես բարկացներ եղբայր. կը կարծես թէ աստանային կը բարկացնեմ, բայց՝ քու բարկացուցածդ Աստուած է ու չես գիտեր. վասն զի քու բռնած գործերուդ բոլորը աստանային կամացը հաճոյ գալիք բաներ են. զԱստուած միայն լեզուով կը սիրես ու գործքով ալ աստանային կը պատուես. ասոր համար Հայրին ըսածը շատ յարմար կուգայ քու գործդդ.

Ե. Հայր ինչ ըսեր է։

Պ. (Ժողովուրդս այս շրթամբք պատուէ վիս և սիրտք նոցա հեռացեալ ինէն ինէն)։

Թ. Այ ժողովուրդը բերանով կը պատուեն զիս, ու սիրտերնին շատ հեռու է ինձմէ կըսէ. 21 գլուխ 19 համար։ Տեսար մէ եղբայր, լեզուով զԱստուած պաշտող ու գործքով ալ աստանային կամքը կատարող ժողովուրդ համար Աստուած ինչպէս գանգատ կընէ։ Ու Բ. Յովհաննէս ալ կը գրէ. (որ ոչ սիրէ զԱստուծոյ է ծնեալ. և որ սիրէ՝ ի աստանայէ է. զի յայտնէ յայտնի են որդիք Աստուծոյ և որդիք սատանայի)։

Թ. Ով որ չը սիրէ նէ Աստուծմէ ծնած

է և ով որ կը մեղանչէ առաւանայէ է. ասկից յայտնի են Աստուծոյ պղինեղը ու առաջնային պղինեղը կըսէ։

ՀԱՒՈՂ ԺԹ.

ՀՈ. Աղեայր հատա ես ինչ պիտի ընեմ, առ քանց մեղքերէդ ես ինձի ազատ կը կարծէի, որովհետև չէի գիտեր թէ զբսիտուելը և կամ եղբայրը առնել մարդասպանութիւն է, և կամ աշխատիտանիրութիւնը, չնութիւն և Աստուծոյ թըշնամութիւն ըլլալն ալ չէի գիտեր, նաև առնել ատկաց կամ չառնել, կենդանւոյ, փորի, հոխոյ, սիրեմ կրկին, կանդուն գործածելը մեծամեծ գործութիւն ըլլալն ալ չէի գիտեր. վասն զի ինձի խրատ տուողներ, առաջս փաթթ բաներկին չէին զգուշացներ որ գիտնայի ու զգուշանայի եղբայր։

Պ. Ինչ ըսեմ ինչ ըսեմ առ քեզի խրատ տուողներուն. առ ցաւը իմ գլուխս ալ կայ եղբայր։ Վախնամ թէ առ մարգարէներուս հանդիպիցայ։

ՀՈ. Ով եղբայր առ մարգարէ չէր զիս խրատողը, հապա իմ ծնողքս էին, հէչ

մէկ օր մը ըսուին ինձի թէ աս բանը մեղք է մընաը, այլ միշտ խաւխ կը պատուիրեին թէ ըսուակ շահիր։

Գ. Երանի թէպ որ ծնողքդ մեղայ չեն ղրկուշացներ եղեր, հապա ծընողք կան որ իրենց զաւկներուն մեղայ չղրկուշացնելէն՝ և զատ մեղք ալ կը սորվեցնեն իրենց զաւկին, վասն զի քանի որ փոքրիկ տղայ է որ դեռ նոր լեզու կելլայ կոր, կըսկսին ծնողքը քոլ կամ եղբայրը, և կամ քոյրը, կամ հօրքոյրը, և կամ մօրքոյրը և այլն։ Տըղային՝ Աստուծոյ անունը չը սորվեցուցած, հայհոյութիւն և անարգել սորվեցընել, և շատ աշխատանքներով, չաքար և կամ ուրիշ բան խոստանալով. սա մարդուն կնոջը անարգէ և այլն, երբոր տըղայն կը սորվենայ ու կանարգէ կը հայհոյէ իրենց կամացը հակառակ, այն առեն շատ խընդալով ու ծիծաղելով տըղային բերանը կը պատնեն ու խոսմունքնին ալ կը կատարեն. Թէպէտ իրենց զատ Հաշուեհարեան և զջօսանաց համար կընեն այս բաները, բայց՝ այն տըղին սիրտը՝ ձեռնամակ և կակուղ մոմաքար կը նմանի, ինչպէս նեղկ որ դըժուէն նէ կը բռնե կայնի ալ Թող

չիտար, և մանաւանդ իր ծնողացրմէն ա-
ռած ներկը շատ դժուար թող կուտայ,
զտօրինակ աշխատիօրէն կըսէն թէ (մարդոց
կիւքը (1) հոգւոյն ներքին կըլլայ) ահա հոգ-
ւոյն տակը եղած սովորեալ կիւքը ծնողացը-
մէն սովրած բաներն են. որ բնաւ չելլար
միտքէ որ հոգին ելլայ: Ու երբոր տըղայն
քիչ մը մեծնայ դպրոց երթալու ժամանակը
գայ. հայրը կառնէ տըղայն դպրոց կը տա-
նի. և ամէնք ալ վարժապետին կը պատուի-
րեն թէ սա տըղային հոգ տար, ես շատ
կարդացող չեմ ուղեր, Տէր Տէր չսիտէ
ընեմ, միայն թէ դըրէն ու թուաբանու-
թեան և հաշիւին աղէկ չանք ըսէ մեզի
տեսիլ պէտք է, մէկ օր առաջ դըպրոցէն
հանելուդ նայէ կըսէ ու կը ձըգէ կերթայ:
Ինչպէս որ մենք ալ երբեմն դպրոց կը նըս-
տէինք որ աղէկ տեղեկութիւն առնինք առ
բաներուն: Ու երբոր քանի մը ժամանակ
դպրոց երթալ գալուքէդ մը գիր և հաշիւ
տրվին ձեռք մը դպրոցէն կը հանէ անվեղ
տըղայն ու կը տանի իր դաշտութեան տունը
այսինքն՝ խանութը, և կըսկըսի իրեն քալը

(1) Կիւք. Խոյ. Թաղահաճ.

պողոտեան և նենգութեան ձամբանները տրվեցընել ըըլայինն։ Նախ՝ սուտ խօսիլ և սուտ երդումներով համոզել ու գէշը աղեկի տեղ տալ։ Ւ֊ը Բ. կանգունը պինտ քաշել։ Ւ֊ը Գ. ծանրը և կամ թեթեւ լիտր գործածել. ծանրով առնել ու թեթեւով տալ, և այսպէս շատ բաներ կը տրվեցընէ. վասն զի հօրը ջանքը ասիկայ է. տըղայն բատակ թող չահի՝ ինչպէս կուզէ թող ընէ, կուզէ արքայութեան երթայ կուզէ գժոխքը. իր հոգը չէ, բոլոր մարդիկ գաւկի համար կը ջանան ու կը վատնեն, ոչ թէ գաւակ՝ Ըստուծոյ պատուէրը պահե ու արքայութիւնը երթայ, հապա առաւտուր ընել տրվելնայ ու բատակ չահի որ հանգստութեամբ կեանք վարեմ։

Հ. Ըսիկայ աղէկ հասկըցայ, բայց՝ վերը ըսիր թէ սուտ մարգարէի հանդիսքեր ես. սուտ մարգարէ ալ կըլլայ։

Գ. Ըյո՛ սուտ մարգարէ ալ կըլլայ։

Հ. Սուտ մարգարէն ինչպէս ճանչնալու է մէկ նըշան մը ունի՞ մի։

Գ. Ամէն արքայութիւնը երթալու լայն ճամբայ ցոյց կուտայ նէ անիկայ սուտ մարգարէ է։

Հ. Ընթայուելիւնը լայն ճամբայ ունի մի։

Պ. Բրիստոսի խօսքէն կիմացուի որ շատ նեղ է արքայութեան ճամբան, որ Աստուծոյ կը գըրե (Անիկ ընդ նեղ դուռն, քանզի արձակ է դուռն և համարձակ ճանապարհ որ տանի՝ ի կորուստ և բազումք են որք մտանեն ընդ նա. քանզի անձուկ է դուռն և նեղ ճանապարհ որ տանի՝ ի կեանս և սակաւք են որք գտանեն զնա) 7 գլուխ 13 համար։

Թ. Նեղ դուռը մըտիք. վասն զի. լայն դուռը և համարձակ ճամբան որ դժոխքը կը տանի այնտեղ մտնողները շատ են. ու նեղ դուռը և նեղ ճամբան որ արքայութիւնը կը տանի. զանիկայ գըտնողները քիչ են կըսէ։ Տես որքան նեղ է եղեր որ՝ վնտռելով հարիւր (1) կը գտանուի։

Հ. Իմ կարծեօքս արքայութիւնը շատ մեծ լայն ընդարձակ տեղ մըն է. ատքան լայն տեղայ դուռը ատքան նեղ կըլլայ մի։

Պ. Ինչա՞ քեզի օրինակ մը տամ՝ որ խելքդ հասնի, աշխարհիս մէջ շատ մեծ փառաւոր քաղաքներ կան. Թէ Նէրոպայի մէջ և Թէ Ասիայի մէջ, բայց՝ այն քաղաքներուն ամենը

(1) Հարիւր. Դժուար։

ձամբայն շատ նեղ ու քարաժայռ (1) և վտանգաւոր (2) կըլլան. սակայն այն երթալու փառաւոր քաղաքին մերոյն համար. այն ձամբային վրայ նեղութիւնը յանձնառու կըլլաս այն բաղձալի քաղաքը մտանալ և անոր բարիքը վայելելու յուսով. ղպտիներուն Պոլիս քաղաքը, թէպէտ շատ մեծ ընդարձակ փառաւոր քաղաք է. բայց նրեք կողմը թէ սեւ ծովը և թէ ձերմակ ծովը պատած ըլլալով. հետեւապէս, Ախիայէն (3) Յարաքիայէն (4), և Հայաստանէն և Պարսկաստանէն (5). և կամ Եւրոպիայէն Պոլիս գալնայոց մտադոց՝ հնար չէ որ ծովը չը մրսած ու այն վտանգաւոր կիրճերը (6) չանցած Պոլսոյ մէջ մտանան, սակայն այն Պոլսոյ ափերուն յայտն է որ այն ահագին ծովուն ու ահագին ալիքներուն (7) մէջ և վտանգաւորներուն աշխատանքը և վիշտը յանձնառու

(1) Քարաժայռ. Գոյամարտ :
(2) Վտանգաւոր. Թշնդիրքի :
(3) Ախիայ. Մնաոլու.
(4) Յարաքիայ. Արաբիստան :
(5) Պարսկաստան. Աջամիստան :
(6) Կիրճ. Պօղազ.
(7) Ալիք. Տալկայ :

կանչ մարդը։ Եւ երբ այն վերադարձնելուն միջէն անվնաս անցնի ու պօղոյ մէջ մնայ ու բարութիւնը վայելէ նէ կոչուի, ու բոլոր քաշած նեղութիւնները կը մոռանայ։

Ը. Ընթացութեան ճամբան ալ մի ծուռ կայ որ ատ ծուռերուն քաղաքը օրինակ տուի։

Գ. Այո, ընթացութեան ճամբան ալ ծուռ կայ, բայց՝ շատ տարբեր է ատ ծուռերէն. վասն զի ատ ծուռը մինակ մարդոց մտքին կերեւնայ խեղճ կոտրտուններ, բայց՝ այն ծուռը մարմնին ալ ու հոգին ալ՝ ի միասին կերեւնայ կոտրտուններ, նաև, ատ ծուռէն շատ պեղեցիկ համեղ ձուկեր կելլան ուտելու, բայց՝ այն ծուռէն օձու և կարճի նման թունաւոր սողուններ կելլան մարդոց հոգին խայթելու։ Եւ այն ծուռը՝ ոչ ինքը մարդոց աչքին կերեւնայ և ոչ անոր մէջ քալող նաւերը՝ որ քեզի ցցըննեմ։

Ը. Աչքի չերեւնար նէ դուն ինչ գիտես, հարկաւ մէկը քեզի հասկցուցեր է դուն ալ մեզի որ հասկցընես շատ աղէկ կըլլայ։

Գ. Ա աշխարհիս մեջտեղ ծովն է, որ կը ծըփանք կոր մէջը, ու ահագին ալիքները

միշտ կը պատնեն մեր հոգւոյ նաւին ու խորտակելու և ընկղմելու կը ջանան, ասոր համար արթուն կենալու է միշտ որ մեր հոգւոյ նաւը չընկղմինք. հապա անկից անցընելով բոլոր աշխարհիս յոյս ըլլած ու փափաքած տրքայութիւնը հասնելու և անվախճան փառքը վայելելու չափապիր ըլլանք։

2. Ասկից այնքան որ ծովը լաւ ճանչ ելոյ ծովեցի է, հապա նեղ դուռը և նեղ ճամբան այն է արդեօք։

Պ. Նեղ դուռը չի կարծես թէ աս աշխարհիս ամէն պատնէշներն են որ պէտք ըլլալ նեղս մտնաս ու նահիս։

2. Հապա ինչպէս դուռ է։

Պ. Ա՛ս աշխարհիս մէջն հոգևոր նեղութեան դառներն են՝ որ խոնարհութեամբ պէտք ըլլալ ծռելով պիտի հընազանդիս, ինչպէս որ Քրիստոս ըսաւ. (Յաշխարհի աստ գնեղութիւն ունիցիք) այսինքն՝ աս աշխարհիս մէջ նեղութիւն պիտի ունենաք կըսէ։ Յովհաննու 16 գլուխ 33 համար։

2. Ինչպէս նեղութիւն է արդեօք Քրիստոսի ըսածը, ես կարծեմ երբեմն առևտուր ընելու, ապրանքի տէր եղած միտքը կը

նեղուի, և կամ ապրանքը աժան կը ծախուի սիրտը կը նեղուի վաստակ քիչ եղաւելի. և կամ ծօնավաճառ (1) գընացած առնելը ճամբան գողերէն վախէն հանդիստ չի կրնար քնանար ապրանքըս կը գողնան ան՛ի արթուն կը կենայ սիրտը կը նեղուի. և կամ տունը կերակուրը իր ախորժակին չի գար, անուշ ու պարարտ չըլլար սիրտը կը նեղուի, և կամ մէկ կամք մը կուներայ կատարելու չի կրնար կատարեր սիրտը կը նեղուի, արդեօք ատո՞նք են մի։

Գ. Ճէ եղբայր՝ ատոնք քու մարմինդ հանդըստութեան. և կամ ըստակ շատցընելու համար քաշած նեղութիւններ են. ատոնք օգուտ չունենալէն ի զատ մեծ մեղք ալ են։ Բրիստոսի ըսած նեղութիւնները ատոնք են։ Նախ քու Թշնամիդ սիրել։ Բ. մէկ երեսէդ զարնեն նէ միւս երեսըդ դարձընել։ Ն՛ւ Գ. քեզի դեշութիւն ընողներուն դեմ աղէկութիւն ընել։ Դ. քեզի անիծողները օրհնել։ Ն՛ւ Ե. քեզի բամբասողներուն համար աղօթք ընել։ Ն՛ւ Զ. քեզի զրպարտութիւն ընելով դէշ անուն մը հանեն ու

(1) Ծօնավաճառ. Բանոխի։

պատիւը կատրեն նէ չը բարկանալու համ բերել. ծամ պահել. աղօթք ընել, ապրանքներէդ կարօտներուն տալումիւ: Ահա սոնք են Բրիստոսի ըսած նեղութիւնները, ինչպէս որ մեր տան դռները որքան նեղ ըլլայ՝ մեր կամաւը դուրանիս խոնարհեցընելով ներս կը մտնանք, նոյնպէս ալ այս վերը պատմած նեղութեան դռներէն յօժարութեամբ դուրանիս խոնարհեցընելով պիտի մտնանք ու արքայութիւն երթանք:

Ե. Ան բոլոր նեղ դռներէն ալ անցնիլը հնձի շատ դժուար կերեւի:

Գ. Ուրեմն քու միտդ արքայութի երթալ չէ, հապա պարապ տեղը զիս կը հօգնեցընես, թէ որ քու միտքդ արքայութիւն երթալ է նէ, սիրով և յօժարութեամբ կրնաս ամեն տեսակ նեղութիւններուն համբերելով ատ դռներէն անցնիլ արքայութիւնը երթալ, բայց՝ նեղ դռնէն և նեղ ճամբայէն անցնող մարդը՝ պէտք է որ իր կրնակը ծանր բեռ չունենայ որ դիւրաւ անցնի նեղ դռներէն:

Է. Ինձը ուր պիտի տանին, անդի այլ խարհքն ալ բեռ կերթայ մի:

գ. Մեր ըսած բերը չըսա սեռած բեռնելըն է, անիկայ ոչ աչքի կերևնայ և ոչ կըռնակէն վար կիյնայ, այն աչքի երևցած բեռներըն որ բեռնակիրները (1) կը վերցընեն, շատ հեռու տանելու նէ կէս ժամ և կամ ամ բողջ ժամ մը կը տանին կը ձըլեն կըռնակնե րնին ու կը հանգըստանան։ Բայց մեր ըսած աչքի չերևած բեռը, ոչ ցորեկը կըռնակէն վար կիյնայ և ոչ գիշերը. ինքը կը ննջէ, բեռը կըռնակին է, չէ թէ կենդանու թեանը՝ հապա մինչև անգամ մեռնի ալ նէ այն բեռը իր հետը կերթայ։

ե. Կռնակի բեռը ինչ է։

գ. Կըռնակը բեռ չտանեցող մարդ չըլլար, թէ արդար և թէ մեղաւոր. արդարներուն բեռը թեթև և մեղաւորներուն բեռը ծանրը կըլլայ։

է. Ընդարները բեռ ունենալը ասկից յայտնի է։

գ. Ինչ Քրիստոս կը վկայէ. (Ելայք առ իս ամենայն վաստակեալք և բեռնաւորք և ես հանգուցից զձեզ)։

թ. Իմ քովս եկէք բոլոր բեռ շալկող ու

(1) Բեռնակիր. Համալ

խանջեցուցներ՝ ես ձեզի պիտի հանդչեցընեմ
կըսէ : Մատթէոս 11 գլուխ 28 համար :

Հ. Քրիստոսի լսած բերը ինչ է արդեօք :

Պ. Քրիստոսի լսած բերը շատ թեթեւ է
ու շատ ալ անուշ է որ կըսէ (Իմ լուծ իմ
քաղցր է. և բեռն իմ բարեկ) :

Թ. Իմ բերըս թեթեւ է ու անուշ ալ է
կըսէ : Մատթէոս 11 գլուխ 36 համար :

Հ. Ո՛ր բերը ինչ է արդեօք որ անուշ է :

Պ. Աստուծոյ պատուէրներն են, որ Սաղ-
մոս 118 գլուխ 103 համար կը գրէ : (Որ-
պէս զի քաղցր են՝ ինչպէս իմ բանք քո. քան
զմեղր բերանոյ իմոյ) :

Թ. Քանի հոգիէդ իմ բերանիս մէջ մեղր
կըն անուշ են կըսէ : Տեսար մի որ մեր բե-
ռը Աստուծոյ պատուէրները պիտի ըլլայ :
Որ շատ թեթեւ ու անուշ են, եթէ Աստու-
ծոյ պատուէրներուն բերը չուկնես շատ
դիւրաւ կրնայինս նեղ դրուներէն ու քարա-
ժայռ ձամբաներէն ու արգելուելիքներ կեր-
թաս, ինչպէս որ քու ձամբաներուդ լոյս կու-
տան որ չես գլտրիր ու չես մոլորիր ու մե-
զայ ծովուն մէջ կիյնար :

Հ. Աստուծոյ խօսքերը ինչպէս ձամբանե-

տուս լայ՝ կուտան ։

պ. Ինձ Սաղմոսը կը վկայէ (Ա՛րագ են քանիք քո ոտից իմոց և լայ տան շաւղից իմոց) ։

թ. Քու խօսքերըդ իմ ոտից ճրագ են ու ճամբանեղուս լայ կուտան կըսէ ։ 118 գլուխ 105 համար ։ Ես ե. Սաղմոն ալ կը գըսէ (Օ՛ր ճրագ են պատուիրան օրինացն և լայ) ։

թ. Օրէնքին պատուէրները ճրագ ու լայ են կըսէ ։ Առակ 6 գլուխ 23 համար ։ Տեսա՞ր մի եղբայր՝ ալքայութեան ճամբան պահելով. և ամէն սեռակ նեղութիւններուն համբերելով պիտի երթայ, ինչպէս որ Պօղոս ալ կըսէ (Բազում նեղութեամբ պարտ է մեզ մտանել յարքայութիւն Աստուծոյ) ։

թ. Շատ նեղութիւն քաշելով պարտք է մեզի Աստուծոյ արքայութիւնը մտնալ ։ Գործոց 14 գլուխ 22 համար ։ Տեսա՞ր մի եղբայր՝ առանց նեղութեան արքայութիւն չերթայուխր, որ պատուիրանը կուտան. թէ Քրիստոս և թէ

առաքեալները թոլորն ալ նեղութիւն ցոյց
կուտան ։

ՀԱՒԻՂ Ի ։

Հ ։ Նեղ դուռը հասկցանք որ աշխարհիս
մէջի հոգևոր նեղութիւններն են , արդեօք
լայն դուռը և լայն ճամբայն որն է որ դժոխ-
քը կը տանի ։

Պ ։ Ա՛ւ սիկսի ալ էլ հասկցար որ կը հար-
ցընես , ահա յայտնի կըսե թէ դժոխքը կը
տանի ։ դիտցիր որ դժոխքին դուռն ու ճամ
բան են ։

Հ ։ Դժոխքին դուռը ինչու լայն կըսէ
արդեօք ։

Պ ։ Դժոխքին դուռը հարկաւ լայն ըսուի
պէտք է ։ ատ դըռնէն ոլ ախոռ անցնի դի-
ւանը մի արդեօք ։

Հ ։ Ան ինչ դիտեմ ով անցնիլը ։ դուն դի-
տես նէ ըսէ ։

Պ ։ Ըլ կարծես թէ ատ դըռնէն մըտնող
նելը՝ ատ աշխարհիս մէջ բարեգործութիւն
դործող , ամէն տեսակ նեղութեան հանդե-
ղող , ու իր էստ կամքը ընտրող , ծոմով ու

պատրաստ և առօրեայ կեր անձը մարեցընտանե-
ըը պիտի մնանան որ ոչքան նեղ ըլայ նե սըը-
մին ։

Հ. Հատա որո՞նք պիտի մնանան աս լայն-
դըտանէն ։

Գ. Անոնց վուշի բեռները շալկող մարդի-
կը պիտի մնանան, որոնցմե ոմանց վուշի բեռ
շալկող մարդը՝ նեղ դըտնելե ու նեղ ձամ-
բաներէ չի կրնար անցնիր. հատա լայն դու-
պէտք է որ սըտկի ։

Հ. Անոնց վուշերը որոնք են ։

Գ. Ընդ Պօղոս կը համրե (Ա Կորնթ. ի. յայտնի
են գործք մարմնոյ, այսինքն՝ շնութիւն, պո-
ռնկութիւն, պղծութիւն, գինջութիւն, կռ-
ապաշտութիւն, կախարդութիւն, թշնա-
մութիւն, հեռ նախանձ, բարկութիւն,
հակառակութիւնք, երկպառակութիւնք,
հերձուածք, չարակնութիւնք, սպանու-
թիւնք, արբեցութիւնք, անառակութիւնք,
և որ ինչ սոցին նմանք են, զոր յառաջագոյն
ևս առաջ ձեզ որպես կանխեաւն ասէ ի՛ն՝
որք զայսպիսի ինչ գործեն զարքայութիւն
Աստուծոյ ոչ ժառանգեն) ։

Թ. Սարսինին գործքերը յայտնի են ։ Ե՞ր

նութիւն, պօռնկութիւն, պղծութիւն, գարշելութիւն, կռապաշտութիւն, կախարդութիւն, թշնամութիւն, քէն նախանձ, բարկութիւն, հակառակութիւն, երկպառակութիւններ (1), պէշ նպատակներ, բամպասանութիւններ, գինովութիւններ, անառակութիւններ, և ինչ որ սոսկ նման են. հիմակուց ձեզի կը պատգեմ. ինչպէս որ առաջուց ալ կսեի թէ որոնք որ այսպէս բաներ կընեն՝ Աստուծոյ արքայութիւնը չեն կրնար ժառանգել:

2. Ձեզի որդւոց բեռ ըլլալը ոսկից յայտնի է:

3. Ինծի Դաւիթ կսէ (Աւօրհնութիւնք իմ բարձրացան քան զգլուխ իմ. և որպէս բեռն ծանր ծանրացան՝ ի վերայ իմ):

6. Իմ մեղքերս գլուխէս վեր բարձրացան. ու ծանր բեռան պէս իմ վրայ ծանրացան կսէ: Սաղմոս 38 գլուխ 5 համար:

2. Ձեզի ծանր բեռ ըլլալը հասկցայ, բայց՝ վուշի բեռ շալկելը նեղ գըտնէն չի կրնար անցնիլ, ատոր իմ խելքս չի պատկեցաւ:

(1) Երկպառակութիւն. Դէլսանիլ:

Պ. Հնա՞ր է որ պատմած մեղաց փուշերը չակուռ, և մարմինդ ալ նեղ դառնալը չը մըտընես, բնաւին ծո՛ւռ պոչ չը պահես. հապա միշտ պարարտ և անուշ կերակուրներ մուլ մարմինդ ուժոլընես ու հաստըլընես. այն առեն մեղաց փուշն չակուռիդ, ու առ դիրացած ու պարարտացած մարմինովդ. ինչպէս աղքատութեան նեղ դուռը պիտի մըտնաս, ինչու որ չես սըղմիր, հապա մին այն դժուարին դառնէն կը սըղմիս շատ լայն ըլլալուն համար։

Հ. Դժուարին դրան լայն աղքան ըլլալուն ես կը զարմանամ կոր։

Պ. Ինչո՞ւ կը զարմանաս եղբայր. աչխարհիս էն ըսեր մի թէ ուղտապանին (1)

(1) Ուղտապան. Տե՛ս էջ։

հետ բարեկամ եղող մարդուն բակին դուռը
մեծ ըլլալ պետք է, զուցէ օր մը ուղտապա-
նը իր ուղտերովը իր բարեկամին տունը գալ
հարկաւորի. եթէ բակուն դուռը նեղ ըլ-
լայ նէ ուղտերը չեն մտներ: Նմանպէս դը-
ժոխքը երթալու մարդիկը. բոլորն ալ հը-
պարտ ուռէյ ը ու հատո. և մեծամեծ ծա-
նրը բեռներ շալկած ուղտերու պէս, անոր
համար լայն դուռ պետք է անոնց մտնալու:

ՀԵՂԻՔԸ փուշի օրինակ է ան:

Պ. Այր ատա Նայդ կը գտնէ (Այդի ե-
ղև սիրելոց յանկեան 'ի տեղւոջ պարտ-
ուելեան. ձանկով բեկոցի տիրութեամբ
պարապեցի. ձողաբարձ զարդարեցի. և տըն-
կեցի 'ի նմա որթ տալեկ, աշտարակ շինեցի
'ի մէջն նորա և գոբ հնձան փորեցի 'ի նը-
մա, և ճնացի ղի բերցէ խաղող և եբեր
փուշ):

Թ. Ինչ բարեի տեղ մը այդի մը տունե-
ցի տղայ ճիւղերով ու բոլորիքը պատ-
քաշեցի, ձողերով զարդարեցի, մէջը աշտա-
րակ շինեցի ու հօր և հնձան (1) փորեցի,
ըսպասեցի խաղող կուտայ տէր, բայց՝ խա-

(1) Հնձան. Ելխանէ:

ղոլի տեղ վրաշ առաւ կլոխ : 5 գլուխ
համար :

Հ. Այդի բառը ով պիտի ըլլայ :

Պ. Այս մարդկային բնութիւնն է, որ աչքի
առջեւ մէջ ծառի նման պինդուած է, հա-
զուագիւտ բարեգործութեան պատուէրն է, ու
փուշին ալ մեղայ պոռալը :

Հ. Այդի բառը մարդոց համար ըլլալը
ինչ գիտես :

Պ. Ինչ Նոյեան կովին կը գոչե : 7 համար :
(Այդի տեսան զօրութեանց տունն խոյակե-
լի է . և մարդն յուզա նորոգուելնէ սիրելի .
ճեղքի վրայ արագ վերադառնա և արար անե-
բաւութիւն) :

Թ. Օձաց սիրոջը այդին խոյակելն տա-
նելն է . ու Յուդայի մարդիկը նոր պինդուած
ճիւղերն են . բայց եթէ պղտորութիւն
կընէ տէր բայց՝ պղտորութեան վոխարէն
անիրաւութիւն ըրած կլոխ :

Հ. Պեղբը ինչո՞ւ փուշի օրինակ տուաւ է :

Պ. Փուշը խոցոտիչ է մարմնին որ տեղը
դպչի կը խոցոտէ ու կը վիրաւորէ . նոյնպէս
մեղքը մեր հոգին միշտ կը խոցոտէ, և մա-
հաւանդ դիւրաւար է շուտ կը բռնուի .

նոյ հանար մեղքը փուշի օրինակ բերեր
. սրսկեաւ դժոխքը գընացողները ամէն
ծարե իր գործած մեղաց կըտակելը պիտի ա-
յլն ու բամբասին : Ահա հակառակ մի նե-
տուելն ու լայն դուռը , եթէ քա հոգիդ ա-
քացութեան կը փախչել նէ , վերը պատ-
մածնեղ դռանները մըտիր , քոյր նեղութիւն-
ներուն համբերէ , անշուշտ կերթաս արքա-
յութիւնը , չէ որ նեղութեան չափուն համ
բերես ու միշտ մեղաց մէջ պատրիս . ու-
ռել խոմել ուրախութիւնով ու ցընծութիւ-
նով կեանքդ անցընես նէ դժոխքին մէջ
ը մտնելիք կըտակին ու անդուն ոգեբաւն
կերակուր ըլլալուդ հոգ մի կասկած մը չը-
կայ , վասն զի այս տեղ ուրացող ու խրնդա-
ցողները՝ այն աշխարհը պիտի լան ու սը-
գան . նոյնպէս ա աշխարհը ապրողները ու
սրտացողները այն աշխարհը պիտի խրնդան
ու ուրախանան :

Հ . Ի՞նչ գիտես ասոնց ըլլալը :

Պ . Ընկ Գրիգոս կըսէ (Այ ձեղ որ ծի-
ծաղիքդ այժմ զի սգայիք և լայիք) :

Թ . Այ ձեղի որ հիմա կը ծիծաղիք . ը-
ոնչ պիտի լայք ու սգայք կըսէ : Ցուկաս 6

գլուխ 26 համար, և 22 համարն ալ կըսէ (Երանի որք լան այժմ ղի ծիծաղեացին)։

թ. Երանի հիմա լացողներուն որ եաև պիտի ծիծաղին կըսէ. Տեսար մի, Քրիստոս այս տեղ ծիծաղողներուն վայ կուտայ ու այս տեղ լացողներուն ալ երանի կուտայ եաև պիտի ծիծաղին ոչի։

ժ. Նըշայր անանիկ է նէ մեր բանը ջամբեցաւ. այս տեղ ինձի մեծ յոյս մը ցոյց տուիր, վասն զի այս տեղ լացողները այն աշխարհքը պիտի ծիծաղին նէ, անշուշտ ես այն ծիծաղողներուն մէջն եմ, ինչու որ իմ աչացըս արցունքը հիչ ցամքած չէ միշտ կը վազէ. հայրս և մայրս կը մեռնի կուլամ. եղբայրս կը մեռնի կուլամ. կինս կը մեռնի կուլամ. զաւակներէս մէկը կը մեռնի այնքան կուլամ որ խելքս կը չնորհի. աղգականներէս մեռնող կըլայ կուլամ. բարեկամներէս մեռնող կըլայ կուլամ։ Նըրանքըս կը գողդոջի կուլամ. և կամ տունըս և ապրանքս կայրի կուլամ։ Մէկ սիրելի անբան անասուն. ձի. Ջորի. ուղտ. կովէշ. կով. ինչ և իցէ. ասոնց կորսուելուն ալ կուլամ, մէկ մարդու մը ասոնցմէ բարկանամ ու վնասըս չը կրնամ առնել

նէ ձեռքէս բան մը չկայ. իմ չար կամքս
չը կրնայ դաժեալս համար կրակիս կուլամ,
սասիկ ցաւ մը կունենամ կուլամ. մին-
չև անդամ ախտժակով ծիծաղած առենս
ալ աչացըս արցունքը կը վազէ. ասոր համար
չոյս ունիմ որ այն աշխարքը պիտի ծիծա-
ղիմ ու խընդամ:

Պ. Ըվսոն քու խելացըդ, քու ազգականներուդ և ապրանքներուդ համար Թափած արցունքըդ բարեպաշտութիւն սեպեր ես, սակայ օգուտ մը չունենալէն ի զատ շատ մեծ ալ վնաս է քեզի եղբայր, ըսան կը. Ինսոս վայ կուտայ առ ուղ ծիծաղողնե-րուն և դուն անոր հրամանին ընդդեմ որ-քան ախտժակով ծիծաղեր ես որ աչացըդ արցունքը վազեր է ու բարեպաշտութիւն սեպեր ես: Ես Բ. Ինսոս հրամայեր է. ունեցած ապրանքըդ ազգականներուդ տուր, դուն անոր հրամանին ընդդեմ՝ ազգականե-րուն չը տալդ ի զատ՝ անոնց դողդոջելուն ալ պատճառ ես: Ես Գ. Ինսոս հրամայեց Թէ ով որ պարտք ունի բարկանայ նէ դը-ժոխքին պարտական կըլլայ, դուն անոր հը-րամանին ընդդեմ այնքան առատիկ բարկացեր

ես որ կամքըդ չը կրնայ զսպելուդ համար
լացեր ես ու վարձք ալ սեպած ես։ Ըն մի-
նաւանդ քու մեռելդ Թուրքեր ու ուրի-
շին մեռելը կուլաս. ատ քու լացած մեռել-
աչխարհիս խնդրելն հետէ վճռեց Աստուած՝
պիտի մեռնիք ատեն, բայց՝ քու մեռելդ քե-
զի անմահ տուաւ Աստուած՝ որ դուն մեռ-
ցուցիր. հիմա քու մեռելդ չես լար ու,
Աստուծոյ պիտի մեռնիք ատեն վճռած մեռե-
լը կուլաս, ուրեմն յայտնի կերեւի որ՝ Աս-
տուծոյ կը պղծուիս ինչպէս իմ սիրելիս մեռ-
ցուց և հիմ ատ փորձանքը իմ գլուխս բե-
րաւ. և ձեռքէդ ալ բան մը չի գար. դուն
ալ քու կամքըդ չը կրնայ զսպելուդ համար
կուակտիս կուլաս. ասիկայ մեծ պետս չէ մի.
եղբայր։

ՃՀ. Իմ մեռելս սիլէ։

Գ. Աչերեցէդ քու հոգիդ է։

ՃՀ. Ծոպիս մեռած ատ ըսայ նէ ինչպէս
կենդանի կը պատմիմ։

Գ. Դուն քեզի կենդանի կը կարծես մէկ
ոչ մեռելատր ես նէ։

ՃՀ. Ինչպէս կենդանի չեմ կարծեր, չէս
տեսնար որ քու հետ կը խօսիմ կոր, մեռած

մարդը ձայն կը հանէ ։

գ. Աշխարհս մէջ շատ տեսակ կենդանիներ կան, թէ գազան թէ անասուն և թէ թռչուն և այլն, և անոնց բոլորն ալ ձայն կը հանեն, բայց՝ անոնց ճիշդ կենդանի ըսելը. որովհետև հոդի չունին միայն շունչ ունին, որ անոնց ընչաւոր կենդանի կըսուին. նոյնպէս մեղուներուն հոդին մեղուց մէջ վառնալով իբր մեռած կը համարուի ու մարմինը մի՛կ ընկալ կը պղտոտի, իբր ընչաւորներուն պէս ։

դ. Աւակից յայտնի է ատ բանը ։

գ. Ինչ Աստեղս ատոր՝ որ Յուդա կըսուի, անիկա կը գըրէ ։ (Օ՛ն տէրն ձեզ եթէ՛ ի յերուն ժամանակս եղիցին մարդիկ արհամարհող երթեալք ըստ իւրեանց ամբարշտութեանց ցանկութեանց, որք են նըշաւակեալք ընչաւորք՝ որք զատին Աստուծոյ ոչ ունին) ։

թ. Ձեզի կըսէին թէ ետքի ժամանակին մարդիկը՝ Աստուծոյ օրէնքը ատոր տակ առնող՝ ու իրենց ուզածնուն պէս չար ցանկութեան երես տուէ գընացող պիտի ըլլան, ատոնք ինքը զինքնին խայտառակող շնչաւոր են,

Ասուածոյ հոգին չունին կըսէ. 1 գլուխ 18 համար։ Եւ Բ. Պօղոս կը գըսէ (Ընչաւոր մարդ ոչ ընդունի զհոգւոյն Աստուծոյ)։

Թ. Ընչաւոր մարդը Աստուծոյ հոգին չընդունիր կըսէ, ահա ընչաւոր ըսածը հոգին մեղք մեռած մարդոց կըսէ։

Ժ. Ես հոգին անմահ կը կարծէի դուն կըսես թէ կը մեռնի։ Ես ինչբան է։

Պ. Թէպէտ հոգին ալ կը մեռնի, բայց՝ մարմնին մեռելի պէս չէ, վասն զի հոգւոյն մեռելը եթէ որ կամիս նէ շուտով կրնաս կենդանացընես, բայց՝ մարմինդ որ մեռնի նի նէ օրքան չանաս կարող չես կենդանացընելու՝ ինչպէս որ Պօղոս կը գըսէ։ (Ինչդեռ մեռեալն էք ի մեղս մեր՝ կենդանիս արար զմեզ ի Քրիստոս)։

Թ. Երբոր մեր մեղաց մէջ մեռած էինք. կենդանացուց զմեզ Քրիստոս։ Ընթերացուց 2 գլուխ 1 համար, ահա տես երբեմն մեռած էինք կըսէ նէ հոգւով մեռեալ է չէ թէ մարմնով։

Ժ. Հոգիս մեղաց մէջ մեռած ըլլալը հասկըցայ՝ հապա ես ինչ պիտի ընեմ ինձի ինչ խրատ կուտաս։

պ. Ի՞նչ խրատ պիտի տամ, քեզմէ զատ. քեզմէ հեռու մարդոց մեռելը լալուդ, քեզի մօտ քեզմէ անբաժ հոգւոյդ մեռելը լայ։

Ս. Ես օտարներուն համար չեմ լար՝ հապա ազգականներուս մեռնող ըլլայ նէ անոր կուլամ։

պ. Դուն քու հոգւոյդ մի մօտ մերձաւոր ալ ունիմ կը կարծես. հայրդ թէ մայրդ. եղբայրդ թէ զաւակներդ, դրացիներդ թէ բարեկամներդ, և մանաւանդ կինդ. որ Ս. Յաուճոյմէ հրաման կայ ծնողացդմէ բաժնուիլ ու կնոջդմէ չբաժնուիս. սակայն՝ անիկայ ալ քեզի օտար է, մահը պիտի բաժանէ իրարմէ, ու այն աշխարհքին ալ իրարու օգուտ մը պիտի չունենայք, թէպէտ հոգիդ ալ մահը կը բաժանէ մարմինէդ ժամանակ մը, բայց՝ երբոր Ս. Յաուճոյ վճռած ժամանակը լրանայ նէ կրկին պիտի միաբրին ու անբաժանելի պիտի մընան յաւիտեան յաւիտենից. թէ արքայութիւն երթան և թէ դժոխքը։ Տեսա՞ մի եղբայր. հոգւոյդ մէ իզուր մերձաւոր բան մը չունիս եղեր, զանիկայ ալ մեռցուցեր ես ու հոգ ալ չես հա-

ներ. այն քու լացած մեռելներէդ որ օդուա
մը ելնի, ութան լաս և ութան ազատակես
կարող չես ողջունցընելու, պարսպ առէր
այնքան կուլաս կը պօռաս, մաղերդ կը փե-
ռես, լաթերդ կը պատռես. երեսդ կը
ճանկռտես. չափէ աւելի արցունք կը թա-
փես. և շատ ժամանակ աւազ կը պահես կու-
րցող չես ողջունցընելու, բայց՝ քու մեռած
հոգիդ քանի մը կաթ արցունքով կրկին ող-
ջընցընելուն հնարը կայ նէ, դուն քնաս ել-
բեք հոգ չես ըներ. աչքէդ արցունք չկա-
նելէդ ի զատ երեսդդ անգամ չես տրամեցը-
ներ երբայր:

Ը. Ըսեր ինձի յոյս մը տուիր. որովհե-
տև մեղօք մեռած հոգիս՝ աչուց արցունքով
որ կողջունայ եղեր նէ Ըստուծով ես դը-
ժոխքը չեմ երթար, լալով և ապաշխարով մեռած
հոգիս կողջընցուներ ու արքայութիւնը
կերթայ. ես յոյս չեմ կտրեր:

Գ. Ես քեզի յոյզ մի կտրեր, լալով
կըսես որ մեռած հոգիդ կրկին ողջընցըներ,
բայց՝ ճըշ պիտի լաս, երեկուան օրը անցաւ
դընաց ալ ձեռք չանցնիր. ու վաղուան աւուր
հասնելու ալ ձեռքդ ձեռապիր մը չունիս.

թէպէտ գալ չաբթու առաւօտ ալ՝ առաւօտ անունը կուտան, բայց՝ էլ կարծես թէ առ օրըս է հապա եօթը օր ալ պակսած կըլլայ քու կեանցըդ, ու եօթը աւուր ձամբ բայ ալ մօտ գընացած կըլլաս մահուան դըռանը։

Ց. Նորէն վրաս վախ մը եկաւ մահուան գաւառը որ յիշեցիր, հապա ես ինչ պիտի ընեմ։

Գ. Ինչ պիտի ընես՝ աշխատիօրէն չէ՞ն ըսեր մի թէ (երեկոյի գործը առաւաւան մի ձըգեր)։ Ընդ ես քեզի խրատ մը տամ, օրէ օր մի ձըգեր, հոգիդ ողջունելուն առնը հիմայ է, ինչպէս որ Սիրաք կըսէ (Մի յապաղեր դառնալ առ տէր. և մի ձըգեր յօրէ յօր, զի յանկարծակի եկեսցէ բարկութիւն նորա, ՚ի ժամանակի վրէժխնդրութեան քայքայեսցէ զքեզ)։

Թ. Մի ուշացըներ ու օրէ օր մի ձըգեր Աստուծոյ դառնալ ապաշխարելդ, վասն զի անոր բարկութիւնը յանկարծակի կուգայ, ու վրէժ առնելու առն զքեզ կը քայքայէ կըսէ։ Տեսար մի որ հոգիդ ողջունելու ժամը ըսուպէն ասիկայ է, հիմա ըսած առե-

նը և ըսուսլեն կանցնի կերթայ ալ չի գըտ-
նուիր, աս կարդացած և հարցուցած ըսուլ-
պէն ալ չենք կրնար գըտնար, մեր կենայ
անուր հիշչի կայնիր միշտ կը դառնայ ժա-
մացոյցին անիւին (1) պէս. մինչև որ ջրլթայն
կըտրի, ալ անկէց ետև կը կայնի ալ չի գառ-
նար, թէպէտ ժամացոյցին ջրլթայն կըտրի
ալ նէ. անոր վարպետ ժամագործը (2) կրնայ
անոր նորէն ջրլթայ անցընելով անիւները
հետզհետե շուտ շուտ դարձընել, բայց՝
մեր կենայ ջրլթայն անդամ մը որ կըտրի
նէ, ալ մարդ կարող չէ անոր նորէն ջրլթայ
